Տ. ԱՍՈՂԻԿ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մայր Աթոռի Արխիվային բաժնի վարիչ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ ԽՆԿԱՄԱՆ Է*

Արդարև, ցնծության տոն է ազգային-եկեղեցական կյանքում, զի տոնում ենք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայոց պետության միակ բարձրագույն հոգևոր հաստատության՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի

130-ամյա հոբելյանը:

130 տարի: Մակընթացության ու տեղատվության ժամանակամիջոց:

130 տարիներ, որոնք ազգային ու եկեղեցական կյանքում առանձնանում են իրենց ծայրաստիճան հուսահատեցնող դժվարություններով ու անհաղթելի թվացող փորձություններով, միևնույն ժամանակ՝ տարիներ, որոնք արժանահիշատակ են հուսառատ իրագործումներով ու ձեռքբերումներով և փառապանծ ու ցանկալի հաղթանակներով...

Ինչևէ, մեր նպատակից դուրս է պատմական քննություն ու վերլուծություն կատարելը: Հոբելյանածոն սրտաբուխ այս խոսքով ցանկանում ենք խոնարհաբար անդրադառնալ էական մի հանգամանքի, այն է՝ 130-ամյա հոբելյանը մեզ ամենքիս, մանավանդ ճեմարանավարտներիս համար, ուրախության ու գոհունակության հաճելի զգացումով համակելուց առավել և առաջ՝ մտահայեցողության ու անդրադարձումի բարեպատեհություն է: Առիթ, որ կոչված է կամքը զորեղացնելու, նվիրումն ամրապնդելու և ծառայասիրության ուխտը նորոգելու, որպեսզի Ճեմարանի պատմության մեջ բացված այլևս նոր էջերում շարունակենք արձանագրել մեր նվիրական հաստատության հինավուրց առաքելության նորանոր իրագործումների ու հաջողությունների մասին վկայությունները:

Այս տեսանկյունից չափազանց կարևոր է արժեվորումը Գևորգյան Հոգևոր Ճեմարանին շնորհված կոչման, ինչն արդյունքն է ազգիս շնորհազարդ Վեհափառ Հայրապետի իմաստուն ու մեծարժեք նախաձեռնության: Կոչում, որ երկու տարի առաջ Հայրենի Կառավարության օրենսյալ վճռով շնորհաբերվեց մերազնյա Հոգևոր Կաճառին: Կարգավիճակ, որն իրավամբ, ինչպես ասվում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակում, «Հայոց պետության արժանի գնահատականն է մեր ժողովրդի հոգևոր կրթության, գիտության ու մշակույթի ասպարեզներում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի բերած անփոխարինելի ավանդի, 130-ամյա հարուստ ժառանգության ու վաստակի, մեր ժամանակներում օրավուր նորոգվող ու ընդարձակվող գործունեության և ներկա գիտա-կրթական ու հոգևոր ներուժի»:

Հայոց պետության վճիռը, ըստ էության, փաստն է այն իրողության ու ստուգության, որ Հայրենի պետությունը ճանաչում է ու վերաձայնում Առաքելական մեր Մայր Եկեղեցու

---

* Խոսք՝ ասված Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակին նվիրված միջոցառմանը Ս. Էջմիածնում նոյեմբերի 3-ին:

բարձրագույն հոգևոր հաստատության՝ հայ իրականության մեջ իրագործող ոգեղեն առումով բացառիկ ու բնավ ոչ փոխարինելի ազգաշեն ու հայրենակերտ առաքելությունը:

Հիրավի, եթե Հայաստանի բոլոր Բարձրագույն ուսումնական հաստատություններն իրենց գործունեությամբ կոչված են մասնավոր գիտելիքներ ավանդելով՝ այլազան ոլորտների համար մասնագետներ պատրաստելու, ապա Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, որ շտեմարանն է, գանձարանը 1700-ամյա Լուսավորչյան դպրոցը հեղեղած իմանալի լույսի, ոգեկանության, քրիստոնեական բարոյականության ու հայրենասիրական իդեալների, յուրածին զավակների՝ հոգևորականների ծառայագործությամբ ու քարոզչությամբ երեկ, այսօր և ցկատարած աշխարհի կենսագործում է իր սուրբ առաքելությունը: Առաքելություն, որ արտահայտվում է այսպես՝ միշտ բարձր պահել աշխարհի ու պատմության առջև ջահը հայկական ոգեկանության, միշտ կենդանի ու պայծառ պահել մեր մայրենի հարազատ լեզուն, հայ հոգիները միշտ սնել ու ազնվացնել հայ ինքնությանը հարազատ մերազնյա հոգևոր մշակույթի սուրբ արժեքներով, ընդմիշտ ամեն բանից թանկ դավանել Տիրոջ ողորմությամբ վերածնված արդի մայր երկիրը մեր՝ հավիտենական Հայաստանը հանուր հայության:

Միով բանիվ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանը մեր ազգային ու եկեղեցական կյանքում մի տապանակ է, խնկաման, որտեղ մայր ժողովրդից վերցված ազնիվ խեժը, խմորվելով քրիստոնեական լույս հավատքով ու հայ ազգային ոգեկանությամբ, այլևս ոչպես անուշահոտ ու սուրբ խունկ խնկարկվում է Հայոց Եկեղեցու բուրվառում՝ ի Հայս տարածելով իր անուշահոտությունը, այսինքն՝ կերպարանափոխում, լուսավորում ու բյուրեղացնում է հայ ազգի հոգին, իմացականությունը, կամեցողությունն ու ստեղծագործ հանճարը: Այլև ամրապընդում է այն գիտակցությունը, որ աստվածաստեղծ մարդու հոգում իբրև բարոյական տենչանք արտացոլում է Երկնքի արքայությունը:

Հոբելյանական այս հանգրվանում հարկ է նաև բարձրաձայնել, որ, իբրև ընթացավարտ սաներ, մեզ համար եղել, մնում և շարունակելու է մնալ անժխտելի ճշմարտություն ու դավանություն, անսասանելի իրողություն ու անբեկանելի սկզբունք. ինչպես Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու գերագահ Աթոռը Քրիստոսակերտ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է, այնպես և Հայոց Եկեղեցու կրթական միակ բարձրագույն հոգևոր հաստատությունն ու աստվածաբանական համալսարանը Գևորգյան Հոգևոր Ճեմարանն է՝ իր պատմական անցյալով, ժառանգորդի իր իրավասությամբ և Ամենայն Հայոց Հայրապետի ուսուցչապետությամբ:

Եվ թող Բարձրյալ Տիրոջ ամենազոր Սուրբ Աջը հավետ պահի-պահպանի Իր իսկ հիմնած Մայր Աթոռը, և թող ազգիս Վեհափառ Հայրապետի մյուռոնաօծ ու շնորհաբաշխ Սուրբ Աջը երկա՛ր-երկա՛ր տարիներ բարեխնամ հովանի լինի հայոց ուսումնական հաստատությանց մայր պանծալի Գևորգյան Հոգևոր Ճեմարանին:

Եվ ուրեմն՝

«Կեցցե՛, կեցցե՛, կեցցե՛ հավետ
Հայրենիքը մեր առհավետ,
Կեցցե՛, կեցցե՛, թող անսասան՝
Մեր Հոգևոր այս Ճեմարան»: